



ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ  
Հեռ: +374 11 314 515

**2019թ.-ի նոյեմբերի 11-ին ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում տեղի է ունեցել նախամրցութային հանդիպում՝ հետաքրքրված հայտատուների հետ**

**Պարզաբանումներ**

**ՀՆՀ-ի համարը՝ 051119-01 Նյութերի ձեռքբերում և շինարարական աշխատանքների իրականացում Փոքր Վեդի գյուղի ոռոգման համակարգի օպտիմալացման ծրագրի շրջանակներում**

Ամիս, ամսաթիվ՝ 11 նոյեմբերի, 2019թ. Վայր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1.	Ինչպես ձեռք բերել DUNS համար՝ հայտում ներկայացնելու համար:	<p>Հայտատուի կողմից կտրամադրվի որևէ կոնտակտային տվյալ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակի կողմից էլեկտրոնային հասցե ուղարկելու համար, որտեղ անհրաժեշտ տվյալների գրանցմամբ հնարավոր կլինի ձեռք բերել DUNS համարը:</p> <p>Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպությունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային պայմանագիր/գնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆիսկալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&amp;A-ն յուրաքանչյուր հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:</p>
2.	Ծավալաթերթում նշվում է, որ գոյություն ունեցող պոմպի թափավոր անիվը պետք է փոխարինվի: Արդյո՞ք կա հստակ նշված մակնիշ այս պահանջի հետ կապված:	Ծավալաթերթի III-րդ բաժինը ֆինանսավորվելու է ջրօգտագործողների ընկերության կողմից: Սույն ՀՆՀ-ն վերաբերում է միայն ծավալաթերթի I և II բաժիններում նշված աշխատանքներին:

3.	Քանի՞ փուլով են իրականացվելու աշխատանքները:	ՀՆՀ-ում նշվում է, որ կատարման ժամկետը 60 օրացուցային օր է, որը հաշվարկվում է պայմանագիրը ստորագրելու պահից:
4.	Կ՞ա պահանջ փաթեթը ներկայացնել նաև էլեկտրոնային տարբերակով:	Սույն ՀՆՀ-ի «հայտատուների համար ուղեցույց» բաժնում նշվում է, որ հայտատուն պետք է հայտի տպագիր տարբերակը մեկ օրինակից ներկայացնի ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ:
5.	Ի՞նչ փաստաթղթեր է պետք ներկայացնել նախկին փորձի հետ կապված:	Սույն ՀՆՀ-ի «հայտատուների համար ուղեցույց» բաժնի «հայտատուների տեխնիկական որակավորումը և փորձը» բաժնում ներկայացվում է պահանջվող փաստաթղթերի ցանկը:
6.	Արդյո՞ք կա լիազորագրի անհրաժեշտություն եթե կազմակերպության տնօրենը անձամբ չի ներկայացնում փաթեթը:	Ոչ: